Հովհաննես Թումանյան

Ուլիկը

1

Խոր անտառում մի այծ է լինում: Ունենում է մի գեղեցիկ ուլ:

Ուլին ամեն օր թողնում է տանը, ինքը գնում է արոտ անելու: Արածում է և իրիկունը կուրծքը լիքը տուն է գալիս: Տուն է գալիս, դուռը զարկում ու մկլկում, կանչում .

Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ,
Ման եմ եկել սարեսար,
Կաթն եմ արել քեզ համար,
Դլոնակը բա՛ց, ներս գամ ես,
Անուշ-անուշ ծիծ տամ քեզ .
Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ:

Ուլիկն իսկույն վեր է թռչում, դուռը բաց անում: Մայրը ծիծ է տալիս նրան ու կրկին գնում արոտ:

2

Էս բոլորը թաքուն տեսնում է գայլը: Մի իրիկուն այծից առաջ գալիս է, դուռը զարկում ու իր հաստ ձայնով կանչում .

Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ,
Ման եմ եկել սարեսար,
Կաթն եմ արել քեզ համար,
Դլոնակը բա՛ց, ներս գամ ես,
Անուշ-անուշ ծիծ տամ քեզ .
Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ:

Ուլիկը լսում է, լսում ու պատասխանում .

Էդ ո՞վ ես դու, չեմ ճանաչում: Իմ մայրը էդպես չի կանչում: Նա քաղցր ու բարակ ձայն ունի: Քո ձայնը կոշտ է ու կոպիտ: Դուռը բաց չե՛մ անի . . . Գնա՛ . . . Չեմ ուզում քեզ . . . :

Ու գայլը հեռանում է, գնում:

3

Գալիս է մայրը, դուռը ծեծում .

Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ,
Ման եմ եկել սարեսար,
Կաթն եմ արել քեզ համար,
Դլոնակը բա՛ց, ներս գամ ես,
Անուշ–անուշ ծիծ տամ քեզ .
Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ:

Ուլիկը դուռը բաց է անում, ծիծ է ուտում ու մորը պատմում .

Գիտե՞ս, մայրիկ, ի՛նչ եղավ: Մի քիչ առաջ մինը եկավ, դուռը զարկեց ու կանչում էր .

Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ:

Ասում էր՝ դուռը բա՛ց արա: Էնպե՞ս հաստ ձայն ունե՞ր: Էնպե՞ս վախեցա՞, էնպե՞ս վախեցա՞ . . . Դուռը բաց չարի, ասի՝ չեմ ուզում, գնա՛ . . .

Պա՛ պա՛, պա՛, պա՛, Սևուկ ջան, ի՞նչ լավ է եղել, որ բաց չես արել, ասավ վախեցած մայրը: Էդ գայլն է եղել, եկել է, որ քեզ ուտի: Մյուս անգամ էլ որ գա, բաց չանես, ասա՝ գնա՛, թե չէ՝ իմ մայրը քեզ կսպանի իր սուր պոզերով: